15.05.25 - 16.05.25
10:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
Երևանի պետական համալսարան

Ս.թ. մայիսի 15-ին և 16-ին Երևանի պետական համալսարանում առաջին անգամ տեղի կունենա ԵՊՀ շրջանավարտների ֆորում, որի նպատակն է ԵՊՀ տարբեր տարիների շրջանավարտների համար ստեղծել հաղորդակցման և համագործակցության հարթակ՝ հնարավորություն ընձեռելով նրանց ներկայացնելու իրենց մասնագիտական փորձն ու ձեռքբերումները, քննարկելու արդիական խնդիրներ, անդրադառնալու Հայաստանի, տարածաշրջանի և համաշխարհային մակարդակով տարբեր ոլորտներում առկա հնարավորություններին ու մարտահրավերներին:

Ֆորումի շրջանակում կանցկացվեն պանելային քննարկումներ, բանախոսություններ, ինչպես նաև կստեղծվի ոչ ֆորմալ պայմաններում միմյանց հետ շփվելու հնարավորություն:

Քննարկումներն ու բանախոսությունները կանցկացվեն հետևյալ թեմատիկ ուղղություններով՝

- ֆիզիկական աշխարհ,
- տիեզերք և տեխնոլոգիաներ,
- հասարակություն և տնտեսություն,
- լեզու, մշակույթ, պատմություն և ավանդույթ:

Մասնակցելու համար անհրաժեշտ է նախապես գրանցվել մինչև ս.թ. մայիսի 5-ը:

Գրանցվելու, ինչպես նաև ֆորումի վերաբերյալ մանրամասներին ծանոթանալու համար անցե՛ք հետևյալ հղումով՝ https://www.ysu.am/activities/919:

Բաց մի՛ թողեք ԵՊՀ շրջանավարտների առաջին ֆորումին մասնակցելու այս բացառիկ հնարավորությունը։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am